ԵՊՀ ԻՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2016-2020ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

**2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ** ԿԱՍԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

15.06.2021

| ՌԾ գործողությունը | Ի՞նչ արդյունքներ էին ակնկալվում | Ի՞նչ արդյունքներ են ձեռք բերվել (նշել փաստերով, օրինակներով, նաև հիմքերով) | Ի՞նչ չի իրականացվել և ինչու՞ | Ինչպե՞ս եք պլանավորել իրականացնել և ի՞նչ ժամկետներում |
|---|---|---|---|---|
| **5.2.4** Մշակել գրադարանի զարգացման հայեցակարգ | 1. Արդիականացված գրադարանային ծառայություն,<br>2. միջազգային չափանիշներին համահունչ գրադարանային ոլորտի առաջընթաց, | Հաստատված հայեցակարգը (ԵՊՀ ԳԽ 26.12.2017թ., արձ. թիվ 28., http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2018/02/appendix-28-9.pdf ) | | 1.Կազմել աշխատանքային խումբ հայեցակարգի նախագծի մշակման համար:<br>2. Քննարկել մշակված նախագիծը գրադարանային խորհրդում:<br>3. Հայեցակարգի մշակված նախագիծը ուղարկել ֆակուլտետներ և ամբիոններ քննարկման համար:<br>4. Ստացված առաջարկությունների հիման վրա վերախմբագրել նախագիծը:<br>5.Խմբագրված և գրադարանային խորհր-դի կողմից հաստատված նախագիծը ներկայացնել մասնաճյուղի գիտխորհուրդ հաստատման:<br>4.Հաստատված հայեցակարգը հասանելի դարձնել հասարակությանը (տեղադրել մասնաճյուղի պաշտոնական կայքէջում): |
| **5.2.5** Ավարտել հիմնական ուսումնական գրականության թվայնացման գործընթացը: | Գրադարանի ամբող-ջական էլեկտրոնային քարտարան, լիարժեքորեն ապահովել էլեկտրոնային զարադարանի | 1. Շարունակվել է առավել պահանջված գրականության թարմացումը, սկանավորվել են ևս 100 ուսումնական դասագիրք և մենագրություն: | 1. Գրադարանային սպասարկման համահավաք «KOHA» համակարգը չի ներդրվել տեխնիկական և մարդկային ռեսուրսների բացակայության պատճառով: | 1. Ներդնել գրադարանային սպասարկման համահավաք «KOHA» համակարգը:<br>2.Շարունակել առավել պահանջված գրականության թվայնացումը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մասնագիտական-ուսումնական գրականության բազան: | | 2. Թվայնացման արդիական համակարգեր նս ձեռք չեն բերվել, կապված թվայնացվող գրքերի պահանջարկից (հիմնական ուսումնական գրականությունն արդեն թվայնացված է և հասանելի է գրադարանի էլկայքէջով ijevanlib.ysu.am ): 3. Կորոնավիրուսային համավարակի և ռազմական դրության պայմաններում տեխնիկական վերազինման գործընթացը որոշակիորեն կանգնած է, սակայն առաջահերթ վերազինումն այլընտրանք չունի: | 3. Թվայնացնել հնատիպ և հազվագյուտ գրականությունը: 4.Արդիականացնել թվայնացնող համակարգերը: Նախատեսված էր իրականացնել 09.2020-06.2021-ին: |
| **5.2.6** Ընդլայնել ուսանողների հասանելիությունը միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին | Գրադարանի զարգացման հաստատված հայեցակարգ, հասանելի դրաձնել միջազգային գրադարանային ցանցերի և կոնսորցի-ումների օգտվելու հնարավորությունները: | 1. Պարբերաբար իրականացվում են մշտադիտարկումներ առկա միջազգային գրադարանային ցանցերից օգտելու խնդիրների հետ կապված: 2. Գրադարանի վարիչը պարբերաբար մասնակցում է Հայաստանյան նորարար գրադարանների աշխատաժողովներին մասնակցություն, նաև այս տարի՝ հունիսի 16-18-ը ([http://ijevanlib.ysu.am/30-09-2019/](http://ijevanlib.ysu.am/30-09-2019/)): 3.Գրադարանի կողմից զնված գրքերի էլեկտրոնային ցուցակներ պարբերաբար տեղադրվում են կայքէջում և սոցցանցերում (ֆեյսբուքյան էջում և խմբում)՝ ապահովելով ուսանողները ավելի մատչելի տեղեկատվությունը: | 1. Համագործակցության շրջանակը հիմնականում ԵՊՀ Գիտական գրադարանի հետ է, չնայած այն հանգամանքին, որ մնացած բուհերի գրադարանների ղեկավարության հետ կա շփում: Գրքերի նվիրատվություն կատարել են Համազգային հայ կրթական և մշակութային միության, «Կլոր սեղան» հիմնադրամի և անհատ ընթերցողների կողմից: 2. Համագործակցության հուշագրերի ստորագրման նախապատրաստական աշխատանքներ են տարվում ՀՊՏՀ, ՀՊՄՀ և մայրաքաղաքային և մարզային այլ բուհերի գրադարանների հետ: | 1. Հնարավորություն ընձեռել օգտվելու ԵՊՀ գրադարանի կողմից առաջարկվող միջազգային գրադարանային ցանցերից և կոնսորցիումներից: 2. Համագործակցություն հաստատել ՀՀ գործող պետական բուհերի գիտական գրադարանների հետ: 3. Իրականացնել անհրաժեշտ գրականության փոխանակություններ միջազգային կազմակերպությունների և բուհերի հետ: 4. Պարբերաբար իրականացնել մշտադիտարկումներ առկա միջազգային գրադարանային ցանցերից օգտելու խնդիրների հետ կապված: Նախատեսված էր իրականացնել 09.2020-06.2021- |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ին: |
| **5.2.7** Ինտենսիվացնել ուսումնագիտական գրականության արդիականացման գործընթացը: | Գրադարանի ամբողջական էլեկտրոնային քարտարան, Ունենալ բոլոր ուսումնական առարկաների պահանջներին համապատասխանող գրականություն, վերազինել գեղարվեստական գրականության ֆոնդերը: | 1. Գրականությունը պարբերաբար արդիականացվում է գնումների և նվիրատվության միջոցով:<br>2. Կիրառության մեջ է պահանջագրերի ինստիտուտը, որի օգնությամբ և մասնագիտական ամբիոնները, և ուսանողները ներկայացնում են իրենց ուսումնական և գիտա-գեղարվեստական գրականության պահանջը:<br>3. Պարբերաբար համագործակցում ենք ամբիոնների հետ:<br>4. Գրականության շարժի և կիրառության մոնիթորինգը կրում է մշտական բնույթ:<br>5. Պարբերաբար իրականացվում է զտում, նախատեսվում է իրականացնել հնամաշ և կիրառությունից դուրս եկած գրականության դուրսգրում: | 1. Համացանցային գրախանութներից գնումների գործընթացի իրականացումը դեռևս հստակ չէ, ինչը պայմանավորված է գնումների իրականացման պետական չափորոշիչներով և հնարավորությամբ:<br>2. Շատ հաճախ հայաստանյան գրախանութներում առկա վաճառքի ենթակա գրականությունը չի համապատասխանում բուհի ուսումնագիտական պահանջներին, ինչով էլ պայմանավորված պահանջների բավարարման գործընթացը դանդաղում է: | 1. Գրականության արդիականացում:<br>2. Գնումների իրականացում համացանցային գրախանութներից:<br>3. Պահանջվող գրականության համալրում հայտերով՝ հաշվի առնելով ֆակուլտետների մասնագետների և ուսանողների պահանջները:<br>4. Համագործակցություն ամբիոնների հետ:<br>5. Պարբերաբար իրականացնել մշտադիտարկումներ առկա մասնագիտական գրականություն վերաբերյալ: Պարբերաբար իրականացնել ֆոնդերի զտում: Նախատեսված էր իրականացնել 09.2020-06.2021-ին: |
| **5.2.8** Բարձրացնել գրադարանային ծառայությունների որակը: | Գրադարանից օգտվողների բավարարվածության աճ առկա գրականությունից և մատուցվող ծառայություններից, բարելավել ուսանող-դասախոս-գրականություն կապը: | 1. ԵՊՀ ԻՄ էլեկտրոնային գրադարանի համացանցային կայք պարբերաբար համալրվում է և աշխատում է բավական դինամիկ: Դիտումների քանակը և ընթացողների վերաբերմունքը ևս խոսում են կայքի հաջողության և նպատակային կիրառության մասին: Նշենք, որ էլգրադարանի էջերի դիտման և համացանցային փնտրման դեպքում առաջնային տողում մեր կայքէջում առկա գրականության հայտնաբերումը, ևս վկայում է կայքէջի հաջողությունների մասին: | | 1. Աշխատանքներ տանել ԵՊՀ ԻՄ էլեկտրոնային գրադարանի համացանցային կայքի համալրման ուղղությամբ:<br>2.Օգնություն ուսանողներին գրականության ձեռք բերման համար:<br>3. Գրադարանին կից բացել՝<br>• *«Հինգշաբթի» գրական ակումբ*<br>*գիտա-մշակութային ակումբ* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 15.06.2021 թ-ի դրությամբ կայքէջի դիտումների քանակն ավելի քան 8,156,790 է, օրական ակտիվություն՝ ավելի քանի 10,000 էջադիտում (http://ijevanlib.ysu.am/):<br>2. Գրականության ընտրման, ուսանողի գեղարվեստական ճաշակի ձևավորման հարցում գրադանավարի դերն անփոխարինելի է:<br>3. Ուստարվա ընթացքում գրադարանում տեղի են ունեցել մի շարք միջոցառումներ և ցուցադրություններ, ցավոք գրքերի շնորհանդեսներ և քննարկումներ, առանձին դասախոսություններ տեղի չեն ունեցել: | | *4.* Մասնագիտական ամբիոնների հետ համատեղ միջոցառումների նախապատ-րաստում և անցկացում՝<br>*ա/ Գրքերի շնորհանդեսներ.*<br>*բ/ նոր ստացված գրքերի ցուցադրություններ և լուսաբանումներ.*<br>*գ/ գրքերի թեմատիկ ցուցադրություններ և համապատասխան թեմաներով բաց դասեր:*<br>5.Պարբերաբար իրականացնել մշտադիտարկումներ ընթերցողների բավարվածությունը գնահատելու համար:<br>Նախատեսված էր իրականացնել 09.2020-06.2021-ին: |

***ԳՐԱԴԱՐԱՆԻ ՎԱՐԻՉ Վ.ՊՈՂՈՍՅԱՆ***